Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունվարի 23-ի N 76 - Ն որոշման

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն՝ N 2 հավելվածում օգտագործվում է հետևյալ հասկացությունը՝

1) **զբոսաշրջային գործակալի ղեկավար**՝ իրավաբանական անձ հանդիսացող զբոսաշրջային գործակալի խորհրդի նախագահը, խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը, նրա տեղակալները:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

2. Զբոսաշրջային գործակալի կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստելու նպատակով ՏԳՏԴ N (ԷՆ) խմբի 79.11 կոդով զբոսաշրջային գործակալի գործունեություն իրականացնելու համար «Գործունեության իրականացման ծանուցման մասին» և «Զբոսաշրջության մասին» օրենքներով որպես զբոսաշրջային գործակալ ծանուցելու պահին դիմողը պարտավոր է բավարարել հետևյալ պահանջները.

1) զբոսաշրջային գործակալի գործադիր մարմնի ղեկավարը, իսկ կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ կոլեգիալ գործադիր մարմնի անդամները կամ վերջինիս նշանակելու, իսկ կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ այն ձևավորելու իրավասություն ունեցող ծանուցող զբոսաշրջային գործունեության սուբյեկտի մարմնի անդամներն ունեն զբոսաշրջության ոլորտի բարձրագույն կամ միջին մասնագիտական կամ այլ ոլորտի բարձրագույն կրթություն.

2) առցանց եղանակով զբոսաշրջային ծառայություններ մատուցելիս, իրացնելիս և առաջարկելիս առկա է մշտապես թարմացված գործող ինտերնետային կայք, որն առնվազն պետք է՝

ա. հասանելի լինի հայերենով,

բ. յուրաքանչյուր էջի վրա տեսանելի մասում պարունակի նշում էջի թարմացման տարվա, ամսի և ամսաթվի մասին,

գ. առանձնացված բաժնում ներառի տեղեկություններ զբոսաշրջային գործակալի ֆիրմային անվանման (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն), հարկ վճարողի հաշվառման հասցեի, հարկ վճարողի հաշվառման համարի, բանկային վավերապայմանների, գրասենյակի հասցեի, կառավարման մարմինների և դրանց անդամների վերաբերյալ,

դ. պարունակի նշում զբոսաշրջային գործակալի հեռախոսահամարի կամ վերջինիս կողմից կարգաբերվող և տնօրինվող էլեկտրոնային հավելվածների կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով զբոսաշրջային գործակալի հետ առցանց կապի հասանելիություն ապահովող հասցեների (հղումների) մասին,

ե. ունենա հղում զբոսաշրջության բնագավառում պետական լիազոր մարմնի կայքի այն էջին, որի միջոցով կարող են ներկայացվել բողոքներ.

3) բացի գործադիր մարմնից՝ մշտապես առկա է անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով նվազագույնը մեկ աշխատող:

3. Եթե զբոսաշրջային ծառայությունների մասին տեղեկատվությունը սպառողին հասանելի է դարձվում ինտերնետային կայքի միջոցով՝ առանց առցանց եղանակով զբոսաշրջային ծառայություններ մատուցելու կամ իրացնելու մտադրության կամ հնարավորության, զբոսաշրջային գործակալի ինտերնետային կայքը պետք է մշտապես թարմացվի և բավարարի սույն՝ N 2 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆԸ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

4. Զբոսաշրջային գործակալի կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստելու նպատակով ՏԳՏԴ N (ԷՆ) խմբի 79.11 կոդով զբոսաշրջային գործակալի գործունեություն իրականացնելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքին, ինչպես նաև «Զբոսաշրջության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված պայմաններին և պահանջներին համապատասխան ներկայացնել նույն նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկատվությունն ու փաստաթղթերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ